

# Հ Ա Մ Ա Տ Ե Ղ Հ Ռ Չ Ա Կ Ա Գ Ի Ր

Շիրակի մարզպետի (Հայաստան)

և

Բուշ-դյու-Ռոնի Գլխավոր Խորհրդի Նախագահի  
(Ֆրանսիա)

միջև

որ ստորև կկոչվեն ստորագրող կողմեր

Ստորագրող կողմերը, հանդիպելով այսօր, 2002թ. փետրվարի 11-ին, համատեղ և հանդիսավոր կերպով հաստատում են հետևյալ դրույթները.

Կողմերը համակարծիք են, որ տեղական իշխանությունների միջև անհրաժեշտ է խթանել տարաբնույթ փոխանակումներն ու համագործակցությունը՝ հարաբերությունների հետագա ընդլայնման և խորացման համար՝ ի նպաստ երկուստեք տևական զարգացման:

Իրականացնում են իրենց առաքելությունը երկու պետությունների ազգային օրենսդրությունների և պետական քաղաքականության շրջանակներում:

Գիտակցում են երկու ժողովուրդների միջև առկա փոխադարձ խորը համակրանքը, որը հիմնվում է պատմության, մշակույթի և ապագայի ընդհանրության վրա :

Ողջունում են Ֆրանսիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ օրենքի ընդունումը, որը, ըստ էության, կոչ է ուղղված բոլոր երկրներին ազատվելու անցյալի ծանր բեռից՝ կերտելու համար արդար և խաղաղ ապագա:

Սույնով, իբրև տեղական իշխանություններ, հաստատում են իրենց համատեղ կամքը՝ գործելու ի նպաստ երկկողմ հարաբերությունների և փոխադարձ համագործակցության զարգացման:



Փաստում են համագործակցության այն առաջին օրինակները, որոնք արդեն իսկ աջակցություն են ստացել Բուշ-դյու-Ռոնի Գլխավոր Խորհրդի կողմից Շիրակի մարզի տարածքում:

Ցանկություն են հայտնում համագործակցելու մասնավորապես առողջապահական և սոցիալական, տնտեսական փոխանակումների, կրթության և մասնագիտական պատրաստման, երիտասարդության և սպորտի, մշակույթի և շրջակա միջավայրի պահպանման ոլորտներում:

Գործում են՝ ի նպաստ երկու տեղական տարածքային միավորների միջև սկիզբ դրված ապակենտրոնացված համագործակցության:

Կոչ են անում երկու տարածքներում գործող հանրային, մասնավոր հաստատություններին և կազմակերպություններին իրենց լիիրավ տեղը գրավել համագործակցության այս նախաձեռնության մեջ:


Պայմանավորվում են կողմերի համապատասխան կառույցներում նշանակել պատասխանատուներ, որոնք կհետևեն հիշյալ համագործակցության ընթացքին:

Կատարված է Երևանում, 11 փետրվար 2002թ.

Ներկայությամբ՝


- .....  
- .....  
- .....

Շիրակի մարզի  
կողմից



Մարզպետ Ֆելիքս ՓԻՐՈՒՄՅԱՆ

Բուշ-դյու-Ռոնի Գլխավոր Խորհրդի  
կողմից



Նախագահ Ժան-Նոել ԳԵՐԻՆԻ

